նական նպատակը՝ Անդրկովկասի միացումը։ Վրացիք էլ դէմ չէին որոշ միութեան, պայմանով, որ Վրաստանի վեհապետական իրաւունքները չտուժեն։ Հայերի համար, քանի Թիւրքահայկական հարցը մնում էր անորոշ, գոյավիճակի ամէն փոփոխութիւն համարւում էր վաղաժամ։ Այս դէպքում էլ նրանք չմերժեցին իրենց համաձայնութիւնը, բայց այդ արւեց այնպէս, որ հաւասար էր մերժումի։

Դեռ կոնֆեդերացիայի խնդիրը չփակած, ապր. 16-ին ադրբէջանցիք բերին զինւորական գործակցութեան առաջարկը Խորհրդային Ռուսաստանի դէմ։ Վրացիք չառարկելով հանդերձ՝ առաջ քաշեցին սահմանագծման հարցը։ Հայերն էլ դէմ արտայայտւեցին արտաքին ճակատով զբաղւելուն։ «Այժմ, երբ անդրկովկասեան հանրապետութիւնների առջև կանգնած է մի նոր վտանգ և նոր արիւնհեղութիւններ են հնարաւոր, հայկական պատւիրակութիւնը մերժում է զբաղւել արտաքին քաղաքականութեամբ», վրդովւած նկատեց ադրբէջանցի Վեքիլովը։

«Այո՛, առարկեց հայերի կողմից Տ. Բէգզադեանը, քանի հողային հարցերը չեն լուծւած, խորհրդաժողովի որոշումները ո՛չ մի արժէք չեն ունենայ։ Եթէ ենթադրենք, որ խորհրդաժողովը որոշէ ընդհանուր ուժերով դուրս գալ արտաքին ոտնձգութիւնների դէմ ի պաշտպանութիւն մեր հանրապետութիւնների անկախութեան, այսինքն՝ հիւսիսի վտանգի դէմ, այն ժամանակ հայկական պատւիրակութիւնը կառաջարկէ քննել հարաւային վտանգի հարցը, որովհետև Թիւրքերը, որքան յայտնի է, դաշնակից են բոլշևիկների հետ։ Բացի այդ, խորհրդաժողովը պէտք է ստոյգ տեղեկութիւններ ունենայ այն համաձայնութեան մասին, որը, իբր Թէ, գոյութիւն ունի Թիւրքիայի և Ադրբէջանի միջև։ Մեզ համար անհրաժեշտ է պարզել նաև Ադրբէջանի կառավարութեան վերաբերումը դէպի մեր պետականութիւնը»։

Նորից հին հարցը՝ «հիւսիսի» ու «հարաւի» վտանգը։ Ադրբէջանցու համար «հիւսիսն» էր սարսափելի. հայերը վախենում էին «հարաւից». էլ ի՞նչ խորհրդաժողով, ի՞նչ կոնֆեդերացիա, ի՞նչ համաձայնութիւն։ Եւ ո՛չ մի համաձայնութիւն էլ չկայացաւ։

Իսկ մինչ պատգամաւորութիւնները խորհրդաժողովում ճառեր էին արտասանում, մինչ Ադրբէջանն իր ամբողջ բանակը կենտրոնացրել էր Ղարաբաղի դէմ, ապր. 28-ի գիշերը, բոլշևիկները, Թիւրքերի աջակցութեամբ և Ադրբէջանի Խորհրդարանի համաձայնութեամբ, առանց մի հատիկ փամփուշտ պարպելու, մտան Բաքու և Ադրբէջանում յայտարարեցին խորհրդային իշխանութիւն։ Նոր գործօն էր մտնում Անդրկովկաս, որ դալիս էր բոլորովին այլ ընթացք տալու նորաստեղծ հանրապետութիւնների կեանքին։ Եւ այդ նոր գործօնի ուշադրութեան առաջին առարկան եղաւ Հայաստանը։ Յեղաշրջման յաջորդ օրը Բաքուից Երևանի կառավարութեան ուղարկւեց հետևեալ վերջնագիրը.